

«ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ

Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 6/6 հասցեի հողամասում
բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծի հողատարածքի մակերեսի և
հարկայնության փոփոխության

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ)



ՆԱԽԱԶԵՌՆՈՂ՝
«ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ

ՋՐՎԵՃ-2024

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	14
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	15
3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	16
3.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր.....	16
3.1.1 Ճարտարապետական լուծումներ և տեխնիկական ցուցանիշներ.....	16
3.1.2 Ջրամատակարարում և ջրահեռացում.....	17
3.1.3 Էլեկտրամատակարարում	18
3.1.4 Գազամատակարարում.....	18
3.2 Շինարարության կազմակերպում.....	18
3.3 Բնառեսուրսների օգտագործում.....	21
4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	23
4. 1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը.....	23
4. 2 Սեյսմիկ բնութագրերը.....	24
4. 3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը.....	25
4. 4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության և պատմամշակութային հուշարձաններ.....	31
4. 5 Օդային ավազան.....	34
4. 6 Ջրային ռեսուրսներ.....	35
4. 7 Բուսական և կենդանական աշխարհ.....	36
4. 8 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում	36
4. 9 Բնապահպանական ազդեցություններ.....	38
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱԹՈՒՄՆԵՐ	55
6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԹԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	56
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱԹԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ(ԲԿՊ)	58
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	64
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	67
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	68
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	72

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	76
3.1. Տեխնիկական պայման՝ Վեոյիա Ջուր	76
3.2. Տեխնիկական պայման՝ ՀԷՑ	80
3.3. Տեխնիկական պայման՝ Տրանսգազ	81
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱ	91
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ	93
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ	94
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ	97
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ	99
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ	102

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՊՄ - անհատական պաշտպանական միջոցներ
- ԲԱՄ - բողոքների արձագանքման մեխանիզմ
- ԲԿՊ - բնապահպանական կառավարման պլան
- ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
- ՀՀՇՆ - Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր
- ԳՀ - գնահատման հաշվետվություն
- ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ՇՄՆ - Շրջակա միջավայրի նախարարություն
- ՇՄՄՏԿ - Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն
- ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՄՊԸ - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՋևՋ – ջրամատակարարում և ջրահեռացում

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության նպատակ	Բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծի փոփոխություն
Ձեռնարկողի անվանում, հասցե	«ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Դավթաշեն 2 թղմ., 34 շենք, բն. 52
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Կոնտակտային անձ՝ Ա. Հակոբյան Հեռ.՝ (+ 374 91) 22 36 90 (+ 374 91) 40 05 02 E-mail: ececaucasus@gmail.com
Նախագծի հեղինակ	Ա/Ձ «Մարտուն Մկրտչյան»
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Ջրվեժ, 17-րդ փ., թիվ 6/6 հողամաս
Հողատարածքի մակերեսը	0,61763 հա

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ*

- ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐ 9-15 ՎԵՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԵՐՈՎ և 2 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԵՐՈՎ
- ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ՝ 6176,3ՔՄ
- ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ 0.000 ՆԻՇՈՒՄ - 2275.0 ՔՄ
- ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ - 2480.0 ՔՄ
- ԳԵՈՑԱՆՑՈՎ ԲԱԿԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՎ ԱՆՑՈՒՂԻՆԵՐ – 1421 . 3 ՔՄ
- ԱՎՏՈՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ -3640.0 ՔՄ X 2 = 7280.0 ՔՄ
- ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ - 104 + 104 = 208 ԿԱՅԱՆԱՏԵՂԻ
- ԲՆԱԿԵԼԻ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ - 31440.0 ՔՄ
- ԲՆԱԿԵԼԻ ՀԱՐԿԵՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՄԱԿԵՐԵՍԸ - 23793.0 ՔՄ
- ԸՆԴԱՄԵՆԸ – 393 ԲՆԱԿԱՐԱՆ
- ՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ - 166.0 ՔՄ

ՀԱՄԱԼԻՐԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 9 - 15 ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵՎ 2 ՍՏՈՐԳԵՏՆՅԱ 3 ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻՑ: ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԸ ԻՐԱՐԻՑ ԲԱԺԱՆՎԱԾ ԵՆ ՀԱԿԱՍԵՅՄՄԻԿ ԿԱՐԱՆՆԵՐՈՎ: ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԸ ՉԾԽԱՑՈՂ ԵՆ, ԲՈԼՈՐ ՍՈՒՑՔԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ 2 ՎԵՐԵԼԱԿ / ՄԱՐԴԱՏԱՐ ԵՎ ԲԵՌՆԱՏԱՐ/, ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻՆ ԿԻՑ ՀԱՐԿԵՐԻ ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՅԻՆ ՄԱՌԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ: ՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԸ ՀԱՐԹ ԵՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՇԵՌԱՑՈՒՄՈՎ: ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԸ ԵՐԵՄՊԱՏՎՈՒՄ ԵՆ ԿԱԽՈՎԻ ՄԱԼԵՐՈՎ: ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԵՐԸ ԵՐԵՄՊԱՏՎՈՒՄ ԵՆ ՍՐԲԱՏԱՇ ԲԱԶԱԼՏԵ ՄԱԼԵՐՈՎ: ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՀԱՆՈՑՆԵՐԻՑ, ՄԱՆ-ՀԱՆԳՈՒՑՅՆԵՐԻՑ ԵՎ ԼՈՂԱՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԲՆԱԿԱՆ Փ100, Փ125 ԵՎ Փ160 ՄՄ ՏՐԱՄԱԳԾՈՎ ՕԴԱՏԱՐՆԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՐԱՆՆԵՐԻ ՄԵՋ 3.0 Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ: ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԴՐԴՄԱՄԲ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԾՄԱՆ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՀՈՐԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԴՈՒՐՄ: ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԱՎՏՈՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԻ ԾԽԱՇԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՐԵՀԱՄԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ:


***Ծանոթություն**

Սույն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է 23.03.2023թ-ին տրված ԲՓ N 0047-23 փորձաքննական դրական եզրակացություն ստացած նախատեսվող գործունեության փոփոխությունը: Նախկին նախագծով նախատեսված 3 հատ միաձուլված 7 հարկանի մասնաշենքերը (կորպուսները) հետագայում որոշակի փոփոխությունների են ենթարկվել և Շրջակա միջավայրի հետ համաձայնեցված՝ նախագծվել են նույն՝ 3 միաձուլված մասնաշենքեր (կորպուսներ)՝ 7-8, 14 և 12-13 հարկերով (ընդհանուր ձևակերպմամբ՝ 7-14 հարկանի 3 մասնաշենքեր): Ներկայիս

նախագծային փոփոխությամբ նախատեսվում է 7-14 հարկերի փոխարեն, հարկերի ավելացմամբ կառուցել 9-15 հարկեր առանց արտաքին և ներքին չափերի փոփոխության:

Այսպիսով, ներկայումս տարածքն ամբողջությամբ մաքրված է, ձևավորված է շինհրապարակ, 3 հատ միաձուլված մասնաշենքերը կառուցված են մինչև 9-րդ հարկ: Շինաշխատքները տվյալ տարածքում սկսվել են մեկ տարի առաջ, անցկացվել են ջրի խողովակները:

Նախատեսվող գործունեությանն ամենամոտը գտնվում են բնակելի տները՝ 12,5 և 21մ հեռավորությամբ:



ՇՄԱԳ հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.))- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.): Ներառում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27. 11. 2006 թ.) -կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.): Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի

հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.): Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.): Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998): Կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.): Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12): Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

ՀՀ կառավարության 16 հունվարի 2014 թվականի N55-Ն որոշում՝ Քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ս, կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և կառավարության 27.05.2015 նիստի “Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին” N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.env.am/> ինտերնետային էջում)։

Միջազգային համաձայնագրեր.

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի« Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Ջրվեժ, 17-րդ փ., թիվ 6/6 հասցեի հողամասում բազմաբնակարան շենքերի կառուցման համար, որի նախաձեռնողը հանդիսանում է «ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ն, որն իրականացնում է նախատեսվող բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծային աշխատանքները:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Ջրվեժ համայնքի ղեկավարի 21.10.2022թ-ին տրված N 261 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով «ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի սահմաններում:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը,
2. N 261 նախագծման թույլտվությունը՝ տրված 21.10.2022թ-ին,
3. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
4. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են՝ «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Բազմաբնակարան շենքերի կառուցման գործընթացն արդեն ընթացքի մեջ է, քանի որ 2023թ. մարտի 23-ին նախատեսվող գործունեությունը ստացել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն՝ ԲՓՈ0047-23: Սակայն, 2024թ. փետրավրի 16-ին շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացվել է պատասխան (ներկայացվել է դիմում, ուր նշվում է, որ իրականացվելու են նախագծային փոփոխություններ և արդյոք այդ փոփոխությունները ևս ենթակա են ՇՄԱԳ փորձաքննության), որ ՀՀ կառավարության 2024թ. հունվարի 11-ի «Նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ ընդլայնման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ դադարեցման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության անհրաժեշտությունը որոշելու կարգը հաստատելու մասին» N43-Ն որոշման համաձայն նախատեսվող փոփոխությունները ենթակա են ՇՄԱԳ փորձաքննության:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Գնահատման հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,

- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

3.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

3.1.1 Ճարտարապետական լուծումներ և տեխնիկական ցուցանիշներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի, Ջրվեժ բնակավայրի 17-րդ փ., թիվ 6/6 հասցեում:

Հողամասի մակերեսը կազմում 0,61763 հա (համաձայն անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, որը ներկայացված է Հավելված 1-ում: Սույն գործունեությամբ նախատեսվում բազմաբնակարան շենքերի կառուցում:

Նախատեսվող գործունեության համար առկա է Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից 21.10.2022թ. տրված N261 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը), որը ներկայացված է Հավելված 2-ում)

Նախատեսվող գործունեության համար առկա են ենթակառուցվածները տնօրինող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանները, որոնք ներկայացված են Հավելված 3-ում:

Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը և իրադրային սխեման բերված են Հավելված 4-ում, իսկ բնակելի շենքերի և ավտոկայանատեղերի տեղաբաշխման սխեմաները՝ Հավելված 5-ում:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը ներկայացված են Հավելված 6-ում: Հանրային քննարկումների հիմքով Ջրվեժ համայնքի ավագանու որոշմամբ տրված նախնական համաձայնությունը ներկայացված է Հավելված 7-ում:

Նախատեսվող գործունեության համար 2024թ. փետրվարի 12-ին Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից տրվել է միջանկյալ համաձայնեցում և շինարարության թույլտվություն, որոնք ներկայացված են Հավելված 8-ում:

Նախատեսվող գործունեության փորձաքննության իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է պետական տուրքի վճարում, որի անդորրագրի պատճեն ներկայացված է Հավելված 9-ում:

Նախատեսվող գործունեության տարածքը տրանսպորտային մոտեցմամբ հարում է համայնքային ճանապարհին: Նախագծվող տարածքով անցնող ենթակառուցվածքներ, այդ թվում ստորգետնյա առկա չեն: Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,
- տարածքի մուտքը կահավորվել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության նպատակով նախատեսվում է տեղադրել արևային վահանակներ: Արտաքինից շենքի ծածկույթը լինելու է ճարտարապետական բետոնով, պատշգամբների արտաքին պատերը ֆիբրեբետոնե սալերով: Շենքի տանիքում տեղադրվելու են արևային վահանակներ, շենքի սպասարկման՝ էլեկտրոմատակարարման խնայողության համար (վերելակների, արտաքին լուսավորության և այլն): Հովացումը լինելու է անհատական, ճակատներում հատուկ նախատեսված հորատներում տեղադրված անհատական հովացման բջիջներով, որոնք քողարկվելու են դեկորատիվ սալերով: Տեղադրվելու է 600վտ հզորության 218 հատ ընդհանուր քանակով արևային վահանակներ: Արևային վահանակների արտադրող էլեկտրաէներգիայի հզորությունը կազմելու է 100կՎտ: Շենքի ծախսերը հոգալու նպատակով այն միանալու է շենքի սպասարկման գծին, տեղադրվելու է երկողմնափի հաշվիչ «ՀԵՑ» ՓԲԸ-ի սնուցման կետի մոտ: Արևային վահանակների տեղադրումը և հետագա սպասարկումն իրականացնելու է համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքով:

Բացառվելու է վնասված վահանակների կուտակումը բնակելի համալիր տարածքում, տանիքում, բաց տարածքներում՝ աղբավայրերում:

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների համաձայն:

3.1.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծը կիրականացվի ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների՝ СНиП 2.04.01-85 համաձայն՝ հաշվի առնելով նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսանում

- ճարտարապետա-շինարարական գծագրերը և գլխավոր հատակագիծը,
- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը,
- տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

ՋնՋ համակարգերի միացումը համապատասխան ցանցերին կիրականացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրվող տեխնիկական պայմանի համաձայն, որը ներկայացված է սույն գնահատման հաշվետվության Հավելված 3-ում:

Մասնավորապես, ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել դեպի Ձորագյուղ տանող ճանապարհով անցնող ջրագծից՝ $d=160$ մմ, իսկ ջրահեռացումը՝ Բագրևանդի փողոցով անցնող կոյուղագծից՝ $d=300$ մմ: Ջրաչափական հանգույցի համար կկառուցվի դիտահոր, կոյուղագծի միացման կետում նույնպես դիտահոր: Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպության կողմից՝ դիմողի հաշվին:

3.1.3 Էլեկտրամատակարարում

Բազմաբնակարան շենքերի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի, որը ներկայացված է սույն գնահատման հաշվետվության Հավելված 3-ում: Համաձայն տեխնիկական պայմանի էլեկտրասնուցման միացման տեսակը՝ եռաֆազ, պահանջվող հզորությունը՝ 1. 050կՎԱ, լարումը՝ 0,40կՎ:

3.1.4 Գազամատակարարում

Բազմաբնակարան շենքերի գազամատակարարումը կիրականացվի համաձայն «Տրանսգազ» ՍՊ ընկերության կողմից տրվող տեխնիկական պայմանի, որը ներկայացված է սույն գնահատման հաշվետվության Հավելված 3-ում: Համաձայն տեխ. պայմանի գազատարի տրամագիծը՝ 325*5մմ, գազատարի որևէ հատվածի վերականգնման կամ վերատեղադրման անհրաժեշտություն չկա, ըստ նախագծի գազի միացումն իրականացվելու է Ջրվեժ ԳԲԿ-ն սնող Dպ300 կողմնատար – գազատարի 0,05կմ-ից:

3.2 Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Ընդհանուր շինարարական աշխատանքների վերջնական տևողությունը կհաշվարկվի մանրմասը աշխատանքային նախագծի մշակման շրջանակներում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքներից առաջացած հանույթի և գրունտի մի մասը նախատեսվում է օգտագործել ետլիցքի և համահարթեցում իրականացնելու նպատակով: Համաձայն նախնական հաշվարկների, հանվող հողային զանգվածի ծավալը կկազմի շուրջ 28.000 խմ (չհաշված բուսահողի շերտը): Ետլիցքի նպատակով նախատեսվում է օգտագործել շուրջ 7.000 խմ հողային զանգվածը, իսկ մնացած զանգվածի հիմնական մասն օգտագործվելու է տարածքների համահարթեցմանն բարեկարգման ստորին շերտի աշխատանքներում: Շինարարական աղբը, որի ընդհանուր քանակը կհաշվարկվի մանրամասը աշխատանքային նախագծի մշակման շրջանակներում, կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացվելիք վայր:

Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրունտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:


Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևան քաղաքի և նրա հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:



Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է (ոչ պիտանի հանույթ) և կենցաղային աղբը, որոնց ընդհանուր քանակը, համաձայն նախնական հաշվարկների կկազմի շուրջ 120մ3 և 16 200կգ: Վերջնական քանակական ցուցանիշները շինարարության ողջ ընթացքի համար կհաշվարկվեն և կներառվեն մանրամասը աշխատանքային նախագծում: Շինարարության ընթացքում վտանգավոր թափոնների առաջացում չի նախատեսվում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

3.3 Բնառեսուրսների օգտագործում

Չնայած այն հանգամանքին, որ տարածքի հիմնական մասն արդեկ ասֆալտապատված է, այնուամենայնիվ, շինարարության ժամանակ իրականացվելու է ջրցան: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ

շինաշխատանքների կազմակերպման համար, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարական աշխատանքների աշխատանքների ընթացքում առաջացած փոշու մակարդակները և դրանց հնարավոր տարածման ռիսկերը կկառավարվեն իրականացնելով շինարարական մակերեսների կանոննավար ջրցանում:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.

$$V = S \times K \times T \times K1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ մոտ 2000 ք.մ

K – 1 մ2 օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 խ. մ,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝

22 օր x 3 ամիս x 3 տարի = 22 օր x 9 ամիս = 198 օր

K1- ջրցանի օրական քանակը՝ 2

Այսպիսով՝ $V = 2000 \times 0.0015 \times 198 \times 2 = 1188$ խ.մ /շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 1188 խ.մ:

Ջրցանի հաշվարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում: Ջրցանի միջոցառումները հրապարակում կկատարվեն պատշաճ մակարդակով՝ կանոնավոր և հաշվարկված ջրցանի ցուցանիշների շրջանակում՝ բացառելով հոսքաջրերի առաջացումը:

Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև .

$$W = (n \times N + n1 \times N1) \times T$$

որտեղ՝

n - աշխատողների և ծառայողների թիվն է՝ 12 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 խ.մ,

n1 - բանվորների թիվն է՝ միջին 25 մարդ


N1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 խ.մ /մարդ օր

T-աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ 22 օր x 36 ամիս = 792 օր :

Այսպիսով՝ $W = (12 \times 0.016 + 25 \times 0.025) \times 792 = 647$ խ.մ/ շինարարություն ժամանակ:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու- կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի նախագծվող տարածքում առկա ջրագծից, համաձայն Հավելված 3-ի 3.1 բաժնում ներկայացված տեխնիկական պայմանի:

Շինարարության ժամանակացույցը



4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի բնակելի կառուցապատման գոտում: Մակերեսը հարթ է, առկա է պարիսպ և անավարտ շինություն: Տարածքի բացարձակ նիշերի տարբերությունը տատանվում են 1384.0-1386.0մ սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից, քանի որ հրաբխային կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ, ուստի դրանց բնորոշ է բարձր ջրատարությունը և բնութագրվող տարածքում տարածված են հիմնականում միջլավային-լավատակի ստորգետնյա ջրերը: Ըստ գրականական աղբյուրների՝ գրունտային ջրերը գտնվում են 20 մ-ից խորը հորիզոններում:

Տեղանքի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը, համաձայն գոյություն ունեցող գրական տվյալների, վերնից-ներքև ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով.

Շերտ – 1 Լիցքային գրունտ չպառակտված, խճա-մանրախճային կազմի, մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդը մինչև 35 %, շերտում մասամբ առկա է կենցաղային և շինարարական թափոններ: Շերտի տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.3-0.4 մ:

Շերտ – 2 Կարբոնատային կեղև՝ խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, սպիտակահողային կավավազային լցանյութը մինչև 30 %, բնութագրվող գրունտը ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը 0.6-1.0 մ: Չորրորդային էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ:

Շերտ – 3 Խճա-մանրախճային շերտ՝ մեծաբեկորներով, հրաբխային ապարներից, կավա-ավազային լցանյութը մինչև 40 %, քարաբեկորները ծածկված են կարբոնատային թաղանթով, տեղ-տեղ հրաբխային խարամի և ավազի բներով, գրունտը միջին խորության է, լցանյութը՝ սակավախոնավ: Շերտը հայտնաբերվել է 1 հորատանցքում, հզորությունը՝ 1.8 մ: Չորրորդային էյուվիապրոյուվիալ առաջացումներ:

Շերտ – 4 Կավավազային շերտ՝ բաց մոխրագույն, գորշ երանգով: Խճի, մանրախճի և մեծ բեկորների պարունակությունը մինչև 20 %, տեղտեղ ցեմենտացած, սակավախոնավ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 7.2 մ: Չորրորդային էյուվիապրոյուվիալ առաջացումներ:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող բնակելի շենքերի շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

4. 2 Սեյսմիկ բնութագրերը

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 6/6 հասցեով տարածքում կառուցվող մնակելի շենքերի տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարմերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ 20.04-04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:



4. 3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

Կլիմա. ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանների բնութագրի համար հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 22,1°C, հարաբերական խոնավությունը միջին ամսականը՝ 50%: Ձմեռը՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը 9. 1°C, բացարձակ նվազագույնը՝ -31°C: Լրացուցիչ ներկայացվել է նաև Երևան Արաբկիր օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները՝ համաձայն որի, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 24,9°C, հարաբերական խոնավությունը միջին ամսականը՝ 50%: Ձմեռը՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը 11. 9°C, բացարձակ նվազագույնը՝ -20,6°C:

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ջրվեժ	-4.5	-3.5	2.2	9.1	13.8	18.0	22.1	22.2	17.9	10.8	3.9	-2.5	9.1	-31	40
Երևան «Արարկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ջրվեժ	80	79	68	63	62	56	50	50	51	64	77	80	65	80	-	50	-
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ջրվեժ	32	34	51	62	72	39	18	9	16	39	36	32	440	185	255
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
Երևան «Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	
		Միջին արագությունը, մ/վ														ըստ ուղղությունների
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Երևան «Արաբկիր»	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9	
		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9							
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1					
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5							

հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4				
	6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6						
հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8				
	2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0						

Աղյուսակ 5. Չյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Զրվեժ	55	77	-	-

4. 4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության և պատմամշակութային հուշարձաններ


Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ: Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի վարչական շրջանում չկան բնության հուշարձաններ՝ համաձայն ՀՀ կառավարության՝ 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելված՝ Բնության հուշարձանների ցանկի:

Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 74 հուշարձան (16 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ ան
Արձանագիր քար	13 դ.	
Բացօթյա կայանների համալիր «Ջրվեժ»	քարի դար	գյուղի հս մասում, բլուրների լանջերին
Բացօթյա կայան «Ջրվեժ-1»	քարի դար	
Բացօթյա կայան «Ջրվեժ-2»	քարի դար	
Գերեզմանոց	11-17 դդ.	գյուղի հվ-ան մասում
Խաչքար	11 դ.	
Խաչքար	1195 թ.	
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի ամ եզրին
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի հին և նոր հատվածների միջև, ճանապարհի եզրին
Խաչքար	13-14 դդ.	գերեզմանոցի ամ մասում
Խաչքար	13-14 դդ.	նորակառույց մատուռում
Խաչքար	13-14 դդ.	նորակառույց մատուռում
Խաչքար	14-15 դդ.	եկեղեցու մոտ
Խաչքար	14-15 դդ.	
Խաչքար	15-16 դդ.	գերեզմանոցի ամ մասում
Խաչքար	15-16 դդ.	գերեզմանոցի ամ մասում
Տապանաքար	1596 թ.	գերեզմանոցի ամ մասում
Տապանաքար	1651 թ.	գերեզմանոցի ամ մասում
Տապանաքար	17 դ.	գերեզմանոցի ամ մասում

Տապանաքար	17 դ.	գերեզմանոցի ամ մասում
Տապանաքար	17 դ.	գերեզմանոցի ամ մասում
Գյուղատեղի	4-16 դդ.	գյուղի աե կողմում
Դամբարանադաշտ	6-7 դդ.	գյուղի հվ-ամ մասում, «Աստրո» միավորման մոտ
Եկեղեցի	4-5 դդ.	գյուղի հվ-աե եզրի գերեզմանոցի հս մասում
Դամբարան	4-5 դդ.	եկեղեցուց հս-աե
Կոթող	4-5 դդ.	դամբարանի վրա
Խաչքար	13 դ.	ազուցված է եկեղեցու հս պատին, մուտքից աջ
Խաչքար	15-16 դդ.	ազուցված է եկեղեցու աե պատին
հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	15-16 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին, մուտքից ձախ
Խաչքար Մելիքսեթի	16 դ.	ազուցված է եկեղեցու մուտքի աջ կողմում
Խաչքար	16 դ.	եկեղեցու բակում
Տապանաքար		եկեղեցում
Եկեղեցի	13 դ.	Քոստադբուրից 150 մ ամ, բլրի գագաթին, ամրոցի հվ-ամ մասում
Եկեղեցի Սբ. Աստվածածին (Կաթողիկե)	1891 թ.	գյուղի հվ եզրին
Խաչքար	13 դ.	ազուցված է եկեղեցու մուտքի աջ կողմում
Խաչքար		ազուցված է եկեղեցու մուտքի վերևում
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հս ճակատին, մուտքից աե
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու աե ճակատին
Դարպաս	19 դ.	եկեղեցուց 8 մ աե
Դարպաս	19 դ.	եկեղեցուց 10 մ հս-ամ
Խաչքար	12-13 դդ.	ազուցված է դարպասի ձախ կողմում
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է դարպասի աջ կողմում
Զանգակատուն	1890 թ.	կից է եկեղեցուն ամ-ից
Գերեզմանոց		
Խաչքար		եկեղեցուց հվ-աե
Խաչքար		
Տապանաքար		եկեղեցու մոտ
Խաչքար		

Կոթող	7 դ.	գյուղի մեջ նորակառույց Թուխ Մանուկ սրբատեղիում
Հուշակոթող Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1976 թ.	գյուղի մեջ
Մատուռ «Վանքաքար» («Ծածկաքար»)	12 դ.	Քոսաաղբյուրից 500 մ հվ
Սրբատեղի «Ամենափրկիչ»		գյուղում
Սրբատեղի Սբ. Սարգիս	ուշ միջնադար	Սբ. Կաթողիկե եկեղեցուց 6 կմ հվ-ամ
Վանական համալիր	5-15 դդ.	գյուղից 2-2.5 կմ ան, «Քոսաաղբյուր» վայրում, գյուղից 1 կմ հվ-ան
Գավիթ	13 դ.	կից է միանալ եկեղեցուն և մատուռներին
Քերեզմանոց	14-18 դդ.	
Եկեղեցի	6-7 դդ.	
Եկեղեցի	13 դ.	կից է նախորդին հվ-ից
Խաչքար	13 դ.	եկեղեցում, ան պատի մոտ
Խաչքար	13 դ.	եկեղեցում
Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին, ներքուստ
Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին, ներքուստ
Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու հվ պատին, ներքուստ
Խաչքար	13-14 դդ.	եկեղեցում, հս պատի մոտ
Խաչքար	13 դ.	եկեղեցու մուտքից հս
Մատուռ	7 դ.	
Մատուռ	13 դ.	դարավանդի վրա, ճամփի եզրին
Խաչքար		մատուռում
Խաչքար		մատուռում
Խաչքար		մատուռում
Կառույցներ տնտեսական	17 դ.	մատուռի տարածքում
Պարիսպ	13-17 դդ.	
Հնձան	13-14 դդ.	



Ինչպես տեսնում ենք նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը եկեղեցու հարևանությամբ իսախաներն են, եկեղեցին և դամբարանադաշտը՝ 1870 և 1766մ հեռավորությամբ: Մնացած հուշարձանները գտնվում են ավել մեծ հեռավորության վրա:

4. 5 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են՝ սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Ջրվեժ համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 10 511 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից Ջրվեժ համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշու մասնիկներ՝ 0,3 մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,015մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³: Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց մակարդակը օդային ավազանում մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՄԹԿ-ն (ՄԹԿփոշի = 0,15 մգ/մ³):

Համաձայն «Հայ հիդրոմետ» ՊՈԱԿ-ի կայքի տեղեկատվության՝ կից ներկայացվում է ՀՀ բնակավայրերի մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային

կոնցենտրացիաները.

ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ԵՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (Փոն), մգ/մ³
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

4. 6 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է: Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակն է: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքս գետը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավարևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետերը, Գետառը: Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը: Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի մոնիթորինգը իրականացվում է ՀՄԿ ՊՈԱԿ -ի կողմից: Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2021թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր և անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

4. 7 Բուսական և կենդանական աշխարհ

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրում: Տեղանքը գտնվում է գյուղական միջավայրի բնակելի հատվածում, որտեղ բուսականությունը գրեթե բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի բնակեցված լինելու պատճառով:

Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ տեղ-տեղ ինքնաբերաբար աճող ոչ արժեքավոր բուսականությունից:


Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Ջրվեժ, 17-րդ փ., թիվ 6/6 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի, պատկանում է «Էլիտար Շին» ՍՊԸ-ին:

4. 8 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում


Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմամբ «Էլիտար Շին» ՍՊԸ-ին պատկանող հողատարածք (0.61763 հա), որի համար առկա է Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից 21.10.2022թ. տրված N261 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է Հավելված 2-ում):

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին տվյալ տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի տարածքի 60%-ը կկանաչապատվի:

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին տվյալ տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի շուրջ 3901,3մ² տարածքում կստեղծվեն կանաչապատ գոտիներ սիզամարգերի, տարբեր ծառատեսակների և ծաղկանոցի համադրմամբ և գեոցանցով ճանապարհ ու անցուղիներ: Գեոցանցի կառուցվածքը տես ներքևի նկարում.



Սիզամարգային բետոնե ցանց 10սմ լցնված սիզամարգի համար բերրի հողով GOST P 53381-2009
Բուսահող GOST P 53381-2009 10սմ
Բազալտե խիճ 0.5-5մմ ֆրակցիային 3-5 սմ GOST 8267-93
Բազալտե խիճ 10-20մմ ֆրակցիային 30 սմ GOST 8267-93
Հավասարեցնող կոպճավազային շերտ 10 սմ GOST 8267-93



Կանաչապատման համար նախատեսված են հետյալ ծառերը և թփատեսակները.

- սպիտակ բարդի – 36 հատ
- փովոդ գիհի - 8 հատ
- սիզամարգ
- թույա՝ տարբեր ենթատեսակների – 25 հատ
- ակացիա - 5 հատ
- ծաղկանոց

Կանաչապատման համար կիրառվող թփատեսակներն ու ծառատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները: Կանաչապատման նախագծում նաև հաշվի է առնվել այն հանգամանքը, որ

բազմաբնակարան համալիրը նախատեսվում է կառուցել ՀՀ Կոտայքի մարզում, ուստի ընտրվել են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին:

Շինարարական աշխատանքների ժամանակ հանվող հողաբուսաշերտը, որը կազմում է շուրջ 1.000 խմ, նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Մինչ այդ հողաբուսաշերտը պետք է պահպանվի կույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառեն դրանց էրոզիան: Միջազգային լավագույն փորձից ելնելով, հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են 2 մ բարձրությամբ կույտեր՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:

Հողաբուսաշերտը պետք է պահպանվի այնպիսի տարածքում, որտեղ այն կարող է մնալ անխախտ վիճակում՝ չխանգարելով տվյալ տեղանքի գործունեությանը: Հողաբուսաշերտը կպահպանվի շինհրապարակի տարածքում: Պետք է ապահովվի, որպեսզի տվյալ տարածքը/տեղամասը լինի մաքուր բուսականությունից և շինարարությունից առաջացող ցանկացած թափոններից, որտեղ կբացառվեն էրոզիոն ցանկացած գործընթացները:

4. 9 Բնապահպանական ազդեցություններ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ գործելակերպի կիրառման արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ Օդի աղտոտում

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 2.1 միջոցառումներ), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի

թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր և կանխատեսվող ազդեցության գնահատում շինարարության փուլում

Արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում շինարարական և կառուցման, մասնավորապես, շենքի վերնի հարկերի կառուցման, կոմունիկացիաների անցկացման և բարեկարգման, ճանապարհների և անցուղիների կառուցման հետ: Արտանետումները առաջանալու են նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում, արտանետումներ են առաջանում նաև հետիոտնային և տրանսպորտային ճանապարհների շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող բիտումից և ամրակցման աշխատանքներից: Ներկայացվող բոլոր արտանետումները կրելու են ժամանակավոր բնույթ և չեն գերազանցում սահմանային թույլատրելի արտանետումները:

Ելակետային տվյալներ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում նախատեսվում է իրականացնել՝ բազմաբնակարան շենքերի, ենթակառուցվածքների, ավտոկայանատեղիի կառուցում/վերակառուցում: Նախատեսվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 792 օրվա ընթացքում: Շինարարության իրականացման յուրաքանչյուր փուլ ունի իր ժամկետը, համաձայն որի իրականացվել է արտանետվող նյութերի հաշվարկը:

Վերակառուցման աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- Գրունտի հանույթ – 28 000 մ³
- Հետ լիցք – 7 000 մ³

Շինարարության ժամանակ օգտագործվելու է նաև ավազ՝ ավազակոպճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլ շինարարական նյութեր:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը ներկայացվում է՝ թվով 12 շինմեքենա/շինտեխնիկա.

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ տեխնիկական միջոցները՝

- Աշտարակային կռունկ KB - 403 A
- Ավտովերամբարձ կռունկ **КС - 65713-1 <<Галичанин>>**, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ **СБ-69Б**
- Բեռնատար ինքնաթափ **МАЗ 5550**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Շարժական կոմպրեսոր **ЗИФ - 55 В**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էլ.եռակցման սարք **СТН 500**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Բուդոգեր **КОМАТСУ D37-EX-22**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էքսկավատոր **Hyundai 170W**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով .

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 * M_{\text{վրկ}} * (365 - (T_{\text{сп}} + T_{\text{д}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C₁ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

C₂ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

C₃ - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N- ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L- մի վազքի միջին երկարությունն է

C₇ - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q₁ - 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C₄ - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

C₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը

K_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևութային շերտի խոնավությունը
 q_1^2 - նյութի փաստացի մակերևութի միավորից փոշու արտանետումները
 S - պլատֆորմայի միջին մակերեսն է ,
 n - ավտոմեքենաների թիվն է
 T_{cp} – ձևաձածկ օրերի թիվն է
 T_d – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 2.

Կատարվող աշխատանքի բնույթը	C_1	C_2	C_3	N	L	C_7	q_1	C_4	C_5	K_5	q_1^2	S	n	M , տ/տարի	Q , գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	15	13	0,037	0.005
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	7	1	0,0013	0,00018
Գրունտի հետլիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	7	1	0,0013	0,00018

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում

Աղյուսակ 3.

Աշխատանքի բնույթը	M , տ/տարի	Q , գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO_2)	0,037	0.005
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO_2)	0,0013	0,00018
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO_2)	0,0013	0,00018
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0,0396	0,00536

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO_2 պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար $1m^3$ աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6$$

$$Q = \frac{\dots}{3600} \text{ գ/վրկ}$$

- P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04
- P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02
- P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2
- P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01
- P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5
- P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0
- B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5
- G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝ 9տ/ժ Այսպիսով,

$$0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 4,5 \times 10^6$$

$$Q = \frac{\dots}{3600} = 0,003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂).

$$M = 0,0036 \times 0,003 \times 72 = 0,00078 \text{տ/շինժամ}$$

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6$$

$$M = \frac{\dots}{3600} \cdot (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

- K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,
 - K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,
 - K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,
 - K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,
 - K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,
 - K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,
 - K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից
 - K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից
 - B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,
 - G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ
 - η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով
- Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.**

$$M_m = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot K_9 \cdot B \cdot G \cdot \eta, \text{ տ/տ}$$

Դժժե G_{rod} – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{in} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 4.

Արտանետվող նյութ	Առավելագույն միանվագ, գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Անօրգանական փոշի >70%	0,000945	0,0076
Անօրգանական փոշի 20-70%	0,003	0,0106

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{\dots}{3600}$$

$$3600$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{\dots}{3600} = \frac{0,026 \cdot 0,084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{ մ}^3 \text{ գազային արտանետման ծավալն է:}$$

$$3600$$

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

k

$$G_i = \sum (m_{U\theta U_i} \cdot t_{U\theta U} + 1,3 \cdot m_{U\theta U_{ik}} \cdot t_{U\theta U_{ik}}) \cdot N_k / 1800, \text{ ր/ց}$$

$k=1$

Դժժ $mU\theta U_i$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ q/p

$1,3 \cdot m_{U\theta U_{ik}}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ q/p

$t_{U\theta U}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{U\theta U_k}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

N_k – k -րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է

i -րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (mU\theta U_i \cdot t_{U\theta U} + 1,3 \cdot m_{U\theta U_{ik}} \cdot t_{U\theta U_k}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ				30ր/ր				
		ընդամենը	չճանրաբեր նվաճ	ճանրաբերն աճ	Ազատ ընթացք	չճանրաբեր նվաճ	ճանրաբերն աճ	Ազատ ընթացք		
Աշտարակային կռունկ	1 (1)	1	0,433	0,5	0, 333	12	13	5	95	+
Ավտովերամբարձ կռունկ	1 (1)	1	0,433	0,5	0, 333	12	13	5	95	+
Բեռնատար ինքնաթափ	1 (3)	3	2,4	2,6	1	12	13	5	320	-
Բեռնատար ավտոբետոնախառնիչ	1 (1)	2	2,4	2,8	1	12	13	5	320	+
Էքսկավատոր	1 (1)	4	2,875	3,2	1,3	12	13	5	110	+

բուլղոզեր	1 (1)	3	1,2333	1,6	0,6667	13	13	5	250	-
կոմպրեսոր	1 (1)	1	0,2333	0,4	0,16667	13	12	5	110	-
ջրի մեքենա	1 (2)	2	2	2,16667	0,83333	12	13	5	90	+

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն $G_i = \sum_{k=1}^k (m_{\text{թու}} - t_{\text{թու}} + 1,3 \cdot m_{\text{թու}} \cdot t_{\text{թու}}) \cdot N_i / 1800,$ <p>բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ</p>
Ածխածնի օքսիդ	0,00362
Ածխաջրածիններ	0,003214
Ազոտի օքսիդներ	0,00409
Ծծմբի երկօքսիդ	0,00204
Մուր	0,00278

Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկայնյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի .

$$\Pi = 10^{-3} \cdot m_k \cdot (\delta a / 100) \cdot (1 - f_p / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

m_k – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

f_p -լուծիչ, %;

K – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot m_k \cdot f_p \cdot \delta' p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

f_p - նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta' p$ – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով .

$$G = \frac{\Pi' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Π' - ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղյուսակ 7.

Աղտոտող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ	0,001128	0,004511
Կախյալ մասնիկներ	0,0015316	0,002256

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը

Աղյուսակ 8.

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	Ժամանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO ₂	Անօրգանական փոշի > 70 SiO ₂	Ածխածնի օքսիդ	Ածխաջրածիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	Դիմեթիլբենզոլ	Կախյալ մասնիկներ
1	2	3	4	5			6	7	
Շինտեխնիկայի տեղեկարժայթվումնան շինադրի տեղափոխում	0,0396	-	-	-	-	-	-	-	-
Փորման աշխատանքներ	0,003	-	-	-	-	-	-	-	-
Բեռման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ	-	0,000945	-	-	-	-	-	-	-
Դիզելային շարժիչից առաջացող	-	-	0,00362	0,003214	0,00409	0,00204	0,00278	-	-

արտանետումներ									
Ամրակցման աշխատանքների ց արտանետումներ	-	-	-	-	-	-	-	0,001128	0,0015316

Կառուցապատման ժամանակ արտանետվող նյութերը գտնվում են թույլատրելի սահմանային նորերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

▪ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (զլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորման , բեռնման և բեռնաթափման աշխատանքներն ավարտվել են և հիմնական աշխատանքները լրացուցիչ հարկերի ավելացման և ներքին հարդարման հետ են կապված, ապա կարելի է հիմնավոր նշել, որ աղմուկի մակարդակի գերազանցում նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով լրացուցիչ նախատեսվում են համապատասխան միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
 - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
 - պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
 - բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
 - օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
 - պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,
 - շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով:
- Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.
- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
 - օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 2.2 միջոցառումներ/ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը շինարարական տեղամասի հարակից տարածքում: Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

▪ **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից: Ջրագիծը պատկանում է <<Վիոլա ջուր>> ՓԲ ընկերությանը, որի կողմից 18.11.2022թ-ին տրամադրված N ՎՋ 6079/2022 տեխնիկական պայմանը ներկայացված է Հավելված 3-ի 3.1 բաժնում:

Ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական և ինժեներական մանրամասները ներկայացված են վերոհիշյալ տեխնիկական պայմանում:

▪ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա բազմաբնակարան շենքերի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությանը սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

- ❖ շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4՝ 120մ³ ծավալով,
- ❖ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 4400կգ/տարի, շահագործման փուլում՝ 16 200կգ/տարի:
- ❖ Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 3513120001995)7մ³, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար՝ (ծածկագիր՝ 3531030501013) 3մ³, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)8մ³ ծավալով:
- ❖ յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից պակաս՝ (ծածկագիր՝ 31402303 01 03 4)՝ 7մ³:

Վերը նշված թափոնները՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին, բացառությամբ օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալարի:

Շինաղբի, չաղտոտված հողային զանգվածի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Երևանի քաղաքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում: Իսկ օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալարը տարածքից կհեռացվի սպասարկող կազմակերպության կողմից:

Կենցաղային աղբի քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n \cdot m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ
n – աշխատողների թիվն է

$$M=37 \cdot 120= 4440 \text{ կգ/տարի}$$

Շինարարությունը տևելու է 36 ամիս, այսինքն՝ $3 \cdot 4400=13\ 320$ կգ/շինժամ:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

▪ **Արտակարգ իրավիճակներ.**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության շինարարության փուլի ընթացքում կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է սույն գնահատման հաշվետվության Հավելված 6-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են շինարարության փուլում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան

պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ՝ համաձայն սույն գնահատման հաշվետվության Հավելված 7-ով ներկայացված մոնիթորինգի պլանի, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե ազդակիրների կողմից արձանագրվեն համապատասխան բնույթի գնագատներ:

Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների համար նախատեսված ծախսերը հաշվարկված են շուրջ 470.000 ՀՀ դրամ:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրուի 17-րդ փողոցի 6/6 հասցեի հողատարածքում բազմաբնակարան շենքերի կառուցապատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության շրջանակներում ազդակիր համայնքն իրազեկվել է նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցումն ու

քննարկումները տեղի ունեցան 2024թ. ապրիլի 16-ին, ժամը 16:00-ին՝ Ջրվեժի համայնքապետարանում, որին մասնակցեցին նախագծի պատվիրատու ընկերության («Էլիատար Շին» ՍՊԸ), նախագծային ընկերության, փորձաքննական գործընթացին աջակցող ընկերության և համայնքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Ջրվեժ համայնքի բնակիչներ: Հանրային քննարկման հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը կազմվել էին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ներկայացված են սույն գնահատման հաշվետվության Հավելված 8-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2024թ. մարտի 12-ի համարում: Հանդիպման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել նաև Ջրվեժի համայնքապետարանում:

Քննարկման արդյունքներով համայնքապետարանի կողմից Ձեռնարկողին տրամադրվել է «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ՏԻՄ նախնական համաձայնության գրությունը՝ ավագանու որոշմամբ, որը ներկայացված է սույն ՇՄԱԳՀ-ի Հավելված 9-ում:

Հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներառված է սույն գնահատման հաշվետվության փաթեթում և էլեկտրոնային կրիչով ներկայացվում է «ՇՄԱՓ կենտրոն» ՊՈԱԿ-ին:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ(ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախատեսվող գործունեության արժեքի մոտ 1,5%
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ				
Առողջություն և աշխատանքային անվտանգություն				
<p>1. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և բազմաբնակարան շենքերի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշտած կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:</p>	<p>1.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>1.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):</p> <p>1.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):</p> <p>1.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>1.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>1.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանական միջոցներով:</p> <p>1.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>1.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

		<p>1.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p>	<p>Կապալառու</p>	
Շրջակա միջավայրի պահպանություն				
<p>2. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Հարակից տարածքում առկա մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի և այլ հանրային կառույցների վրա գնահատվում են. <p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p>2.1 Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <ul style="list-style-type: none"> - Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում: - Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: <p>2.2 Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <ul style="list-style-type: none"> - Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ անհաժեշտության՝ ազդակիր անձանց կողմից բողոքի դեպքում: - Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին: - Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում: - Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում: <p>2.3 Բուսականության պահպանության կառավարում</p> <ul style="list-style-type: none"> - Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանց պաշտպանությանը շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ 	<p>Կապալառու</p> <p>«Էլիտար Շին» ՍՊԸ</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>«Էլիտար Շին» ՍՊԸ</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

		ազդեցություններից:			
Շինարարական հրապարակի կազմակերպում					
3. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի կազմակերպումից ազդեցություններ	ոչ ճիշտ բխող	<p>3.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>3.2. Շին հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>3.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>3.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախազգուշացնող նշաններ:</p>	Գապալառու Գապալառու Գապալառու Գապալառու	
Երթևեկության կառավարում					
4. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	Երթևեկության ազդեցություններն են.	հնարավոր	<p>4.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>4.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>4.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>4.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>4.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին</p>	Գապալառու Գապալառու Գապալառու Գապալառու	

		<p>անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>4.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>4.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>4.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Արտակարգ իրավիճակների կառավարում				
<p>5. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>5.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>5.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>5.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>5.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>5.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>5.6. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>5.7. Մշտապես իրականացնել շինարարական</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

		<p>հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>5.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>5.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>5.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն (Հավելված 13):</p>		
Թափոնների և նյութերի կառավարում				
<p>6. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>6.1. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>6.2. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>6.3. Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</p> <p>6.4. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

		<p>6.5. Կենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում:</p> <p>6.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին.աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Աշխատողների վերապատրաստում				
<p>7. Աշխատողների վերապատրաստում</p>	<p>Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p>	<p>7.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>7.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողկարգի մասին;</p>	<p>«Էլիտար Շին» ՍՊԸ, Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Աշխատանքային տեղամասի վերականգնում և բարեկարգում				
<p>8. Շինարարակի վերականգնում և տարածքի բարեկարգում</p>	<p>Անհրաժեշտ է շինարարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը, թափոնները և այլն:</p>	<p>8.1. Շինարարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>8.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>8.3. Անհրաժեշտ է մաքրել շինարարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>8.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխան ատուներ	Մոնիտորինգի հաճախակա- նություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Շրջակա միջավայրի պահպանություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - ըստ անհրաժեշտության՝ փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	«Էլիտար Շին» ՍՊԸ Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
2. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված և տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«Էլիտար Շին» ՍՊԸ Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«Էլիտար Շին» ՍՊԸ Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան


	կառույցների պատճառով վնասներ:					
4. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	«Էլիտար Շին» ՍՊԸ Կապալառու	
